

ղեցական բարձրագոյն ծառայութիւններու մէջ: Նախ Սթանիսլաւսքի ժողովրդապետ, յետոյ Աւագերէց Փոտոլիոյ և Փուքուցի եկեղեցիներուն և ապա Մեծաւոր կամ Առաջնորդ նոյն այդ թեմերուն և Սեմիզոմիւնը հետզհետէ կ'աճի եկեղեցական Բարձրագոյն Իշխանութեանց կողմէն: Ատոր ապացոյց՝ իրեն յանձնուած հաշտարարի դերը Կամենիցի Երրորդականաց և Կարմեղեանց միջև ծագած անհամաձայնութեան յուզումնալից խնդիրներուն մէջ: Սրբազան Նուիրակը Սանդիլնի՝ յանձնած էր այդ գործը Կամենիցի Հոգիոս եպիսկոպոսին, և Ստեփանոս վարդապետն ալ նշանակած էր որպէս միջնորդ-հաշտարար: Եւ արդարեւ իր իմաստուն միջնորդութեամբ այդ տարածայնութիւնները կը հարթուին:

Իր բազմազարդ եկեղեցական գործունէութեան ընթացքին, ան նուիրուած էր նաեւ գրաւորական վաստակներու: Բացի յիշատակուած Բառարանէն, պատրաստած է.

1) Փիլիսոփայութեան գիրք մը, որ կը կոչուի ձեռագիրներու մէջ Փիլիսոփայութիւն Ստեփանեան, կամ Ներածութիւն ի յովակեղակ Փիլիսոփայութիւն Արիստոտէլի: Դպրոցական իմաստասիրութեան մեթոտով գրուած գործ մը, որ ժամանակին պէտքերուն անշուշտ գոհացում կու տար: Մեծ Տրաւնարանութիւն բաժինը կը վերջանայ հետեւեալ բառերով. « Այսքան բաւականացի յաղագս Տրամաբանական գիտութեանն, որոյ մթին և դժուարահաս վիճարանութեանցն իբր փշուտ վայրեացն զերծեալք ի հրճուալի և փառացի դրախտն բանականութեան մտցուր հանդերձ Աստուծով փրկչաւ մերով, որում գայս զուշնաքեայ տքնութիւնս ի խորոց սրաի նուիրեմ և մնամ: (Սարգր. Ս. Ստեփանեան Ռօշրայ վարդապետ) »:

2) Ատուածարանութիւն դպրոցական,

երկու հատոր: Բարոյական աստուածաբանութիւն մ'է. ասիկէ քաղուածքներ կան Վիեննայի Մատենադարանը 519 թիւով:

3) Կենսագրութիւն Հայոց եպիսկոպոսաց ի Լեւոս:

4) Մաշտոց Հայոց գրեալ ի թեմակնից:

5) Ժամանակագրութիւն և Նամակակցութիւ 266 Ձեռգր. Մատենադարանին Մխիթարեան հարց Վիեննայի: Այս ժամանակագրութիւնը կը սկսի Քրիստոսի թուականէն և կը հասնի մինչև իր օրերը: Կը կոչուի նաեւ Տարեգիրք, տարուէ տարի ամփոփելուն համար դէպքերը: Կը ծանրանայ մանաւանդ Լեհահայոց կեանքին, և հին դարերուն միջազգայինի կողքին՝ կը կցէ հայկականը, հանելով ազգային պատմիչներէն: Իր օգտագործած հայ պատմիչները թուելով կ'աւելցնէ. « զՄովսէս Խորենացի, զՅօհաննէս կաթողիկոսն, զՄեարոպն, զՄխիթարն, զԱռաքելն, և զՀայ Պատմիչ մի, որ ի սկզբանէ աշխարհի մինչև ցամաք Հայոց ՈՁԵ (1236) հասոյց, բայց զանուն սորա գտանել ոչ կարացի »:

Նամակները նոյնպէս հետաքրքրական և պատմականօրէն օգտակար՝ կրնան բաւական լոյս տալ լեհահայ զաղութին և եկեղեցական կեանքին շուրջ: Այդ նամակներէն մէկուն մէջ իր հօրը մասին կ'ըսէ. « Պ. Ստեփան Սարգսեան Ռօշրայ հայրս իմ մեռա Մարտի ԻԹ »:

Այս փոքրիկ մէջբերութիւնը առիթ կու տայ մեզի Հ. Աճառեանի Անձնանունները Բառարանին մէջ սպրդած սխալի մը մասին անդրադառնալու: Ստեփանոս Ռոշրայի հօր անունն է Ստեփան Սարգսեան Ռօշրայ. որ կը նշանակէ թէ իր հայրը էր որդի Սարգիսի և իր ընտանեկան մականունով Ռոշրայ: Աճառեան շփոթութիւն մը ստեղծած է անտեսելով այս մանրամասնութիւնը, Սարգսեան համարե-